# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶ, ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔ



# ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ
# ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ
# (2017-2021թթ.)

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
# ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ
# 2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ
# ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Կազմել է՝ համայնքի ղեկավար՝ Կ.Փարեմուզյան

Հաստատվել է համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 22-ի N 79-Ա որոշմամբ

# Բովանդակություն

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք........................................................ 3
2. Համայնքի իրավիճակի նկարագրություն.................................................... 4
 2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն............................................... 4
 2.2. Համայնքի սեցիալ-տնտեսական իրավիճակը.......................................... 5
 2.3. Համայնքում իրականացվող ծրագրեր................................................ 12
 2.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և Ֆինանասական կանխատեսումները.................................................... 16
 2.5. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ.................................... 18
 2.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈՒԹՍՀ) վերլուծություն............................................ 20
3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում........................ 22
 3.1. Համայնքի զարգացման տեսլական ....................................................... 22
 3.2. Համայնքի զարգացման անմիջական նպատակներ.................................. 22
4. ՀՀԶԾ մոնիթորինգ.................................................................................. 39

# 1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք

Տեղական ինքնակառավարման մարմինները ժամանակակից բարդ և փոխկապակցված աշխարհում համայնքի զարգացման և հանրային ծառայությունների մատուցման միջոցով համայնքային կարիքների բավարարման գործառույթները արդյունավետ իրականացնելու, իրենց վերապահված լիազորությունների սահմաններում համայնքի առջև ծառացած խնդիրներին ծրագրային և համակարգված մոտեցումներ, լուծումներ տալու համար պարտավոր են իրականացնել հեռանկարային ռազմավարական պլանավորում:

Այդ նպատակների իրականացմանն է միտված Ալավերդի համայնքի զարգացման հնգամյա ծրագիրը: Այն իր մեջ ներառում է համայնքի ներկա սոցիալ-տնտեսական իրավիճակի վերլուծությունը, համայնքի ներուժի, ուժեղ և թույլ կողմերի գնահատականը և զարգացման ռազմավարական ուղղությունները:

Համայնքի զարգացման հնգամյա ծրագրի հիմնական նպատակն է իրականացնել ՏԻՄ-երի առաքելությունը՝ բարձրացնել համայնքի բնակիչների կյանքի որակը, բարեկարգել և բարելավել նրանց կենսագործունեության միջավայրը, համայնքի բնական հարստությունը և պատմամշակութային ժառանգությունը ծառայեցնել համայնքի կարիքների բավարարմանը՝ նպաստելով համայնքի ներդրումային գրավչության բարձրացմանն ու բարենպաստ բիզնես-միջավայրի ձևավորմանը:

Որպես ժողովրդավարական կառույց՝ համայնքապետարանը զարգացման ռազմավարական պլանը մշակել է համայնքի ավագանու անդամների, բնակիչների, հասարակական կազմակերպությունների և այլ շահագրգիռ կողմերի հետ միասին:

# 2. Համայնքի իրավիճակի նկարագրություն

## 2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն

Ալավերդին ՀՀ միջին մեծության քաղաքային համայնք է, գտնվում է հանրապետության հյուսիսային մասում, վարչականորեն մտնում է Լոռու մարզի մեջ, մարզկենտրոն Վանաձորից հեռավորությունը 44 կմ է, Երևանից՝ մոտ 167 կմ: Ալավերդի համայնքը տնտեսաաշխարհագրական բարենպաստ դիրք ունի: Սահմանակից է Վրաստանի Հանրապետությանը (հեռավորությունը սահմանից՝ 43 կմ), ինչը կարևոր առավելություն է՝ ցանկացած արտադրանք հարևան հանրապետություն արտահանելու համար: Համայնքի միջով է անցնում հանրապետության երկաթուղային հաղորդակցության գլխավոր երակը՝ Թբիլիսի-Երևան երկաթգիծը, հանրապետության արտահանման և ներկրման ավտոտրանսպորտային գլխավոր՝ Թբիլիսի-Ալավերդի-Երևան մայրուղին, ինչպես նաև՝ Հայաստանի ամենաջրառատ անդրսահմանային Դեբեդ գետը: Ալավերդու երկաթուղային երկու կայարաններից մեկում՝ «Ալավերդի» կայարանում, կան բեռնաթափման և բեռնաբարձման համար անհրաժեշտ բոլոր պայմանները:

Ալավերդի համայնքի մակերեսը 47.99 քառ. կմ է, տարածվում է Դեբեդ գետի երկու ափերին: Կտրտված ու բարդ ռելիեֆի պատճառով քաղաքի թաղամասերն իրարից բավականին հեռու են: Ռելիեֆին բնորոշ են տարբեր մակարդակի բարձրություններ (750-1400 մ), խիստ մեծ թեքություններ (մինչև 350): Համայնքն ունի բարեխառն ու մեղմ կլիմա՝ պայմանավորված մակերևույթի համեմատաբար ոչ մեծ բարձրությամբ: Ամենաբարձր ջերմաստիճանը դիտվում է հուլիս ամսին՝ +30°C, +35 °C, ամենացածրը՝ հունվար, փետրվար ամիսներին՝ - 17-18 °C: Տեղումների քանակը 800 մմ է:

Բնակչության թիվը, ըստ Ազգային վիճակագրական ծառայության (ԱՎԾ)՝ 2011-ին անցկացված մարդահամարի տվյալների, 20 180 է, որից 9554 (47,3%) տղամարդ և 10 626 (52,7%) կին: Ըստ ԱՎԾ-ի տվյալների՝ նույն թվականին համայնքի փաստացի բնակվողների թիվը եղել է 13 324 (66,02%): 2016թ-ին համայնքում հաշվառված է 20052 մարդ, որից փաստացի բնակիչների թիվը 13863 է:

| Հ/Հ | Տարիքային խումբ | Արական | Իգական | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| 1 | Մինչև 1 տարեկան | 74 | 78 | 152 |
| 2 | 1-2 տարեկան | 66 | 76 | 142 |
| 3 | 3-4 տարեկան | 87 | 95 | 182 |
| 4 | 5-6 տարեկան | 87 | 88 | 175 |
| 5 | 7-10 տարեկան | 282 | 330 | 612 |
| 6 | 11-14 տարեկան | 246 | 264 | 510 |
| 7 | 15-17 տարեկան | 310 | 320 | 630 |
| 8 | 18-22 տարեկան | 604 | 556 | 1160 |
| 9 | 23-45 տարեկան | 2427 | 2587 | 5014 |
| 10 | 46-62 տարեկան | 1570 | 1620 | 3190 |
| 11 | 63 և ավելի | 968 | 1128 | 2096 |
| Ընդհանուր | | 6721 | 7142 | 13863 |

Դեռևս 1960-ականներին համայնքին հարակից 3 գյուղեր՝ Ակները, Սանահինը և Մադանը, համայնքների խոշորացման արդյունքում վարչականորեն մտել են Ալավերդու տարածքի մեջ:

Ալավերդի համայնքի վարչական տարածքը կազմում է 6795.82 հա, որից՝ գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 3130.32 հա, բնակավայրի հողեր՝ 588.17 հա, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների հողեր՝ 93.72 հա, էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների հողեր՝ 40.88 հա, հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 23.9 հա, հատուկ նշանակության հողեր - , անտառային հողեր՝ 2862.92 հա, ջրային հողեր՝ 55.91 հա:

Համայնքային սեփականության հողերը կազմում են ընդամենը 2305.26 հա, որից գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 1952.67 հա, այդ թվում վարելահող՝ 28.33 հա, խոտհարք՝ 165. 76 հա, արոտ՝ 1161.11 հա, այլ հողատեսքեր՝ 597.47 հա, բնակավայրի հողեր՝ 327.83 հա, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների հողեր՝ 10.89 հա, էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝ 1.38 հա, հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 12.25 հա, ջրային հողեր՝ 0.24 հա:

## 2.2. Ալավերդի համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակը նկարագրող ցուցանիշներ

Ալավերդի համայնքում ներկայում գործում է արդյունաբերական խոշոր ընկերություն՝ «Էյ-Սի-Փի» ընկերությանը պատկանող պղնձաձուլական գործարանը: Ընկերությունում 2012թ-ին 661 մարդ է աշխատել, ներկայում 584 մարդ է աշխատում (2012թ-ին աշխատածների ցուցանիշի 88,4%-ը): Նախկինում, երբ գործարանն աշխատել է արտադրական ողջ հզորությամբ, այստեղ 2500 մարդ է աշխատել (ներկայում գործարանի աշխատակիցների տոկոսային ցուցանիշը 23,4% է՝ նախկինի համեմատ): Ալավերդու Պղնձաձուլական գործարանը սև պղինձը կիսաֆաբրիկատ վիճակում արտահանում է Գերմանիայի Դաշնային Հանրապետություն, որտեղ համապատասխան գործարաններում պղնձից առանձնացվում են թանկարժեք մետաղները, այնուհետև ռաֆինացված պղինձը օգտագործում են մետաղալարերի, խողովակների արտադրության մեջ:

Համայնքում նախկինում գործել է և այժմ էլ շարունակում է գործունեություն ծավալել հացի գործարանը, մի քանի այլ փոքր արտադրամասեր, որոնց արտադրանքը հիմնականում սպառվում է Ալավերդիում և հարակից համայնքներում: Համայնքի տարածքում կան մեկ տասնյակից ավելի քարի վերամշակման արտադրամասեր, որոնց սպառման շուկան հիմնականում Հայաստանի Հանրապետությունն ու Ռուսաստանի Դաշնությունն են:

Ալավերդի համայնքում գործում են նաև հացի, գարեջրի և պահածոների փոքր արտադրամասեր, որոնց արտադրանքի սպառման հիմնական շուկան Հայաստանն է:

Ալավերդին ունեցել է կարի խոշոր արտադրամաս (շուրջ 1600 աշխատակից), տեքստիլ արդյունաբերություն (150-200 աշխատակից), շինարարական տրեստ (200 աշխատակից), կաթի վերամշակման (50 աշխատակից) և գարեջրի գործարաններ (50 աշխատակից), երկաթուղային հանգույց՝ Լոկոմոտիվային Դեպո (շուրջ 500 աշխատակից): Ներկայում Ալավերդիում կան անհրաժեշտ բոլոր նախադրյալները՝ կարի արտադրություն

հիմնելու համար: Կարի նախկին արտադրամասի շենքը բարվոք վիճակում է: 2016 թվականի ընթացքում Ալավերդու համայնքապետարանը կարի արտադրության ոլորտում համապատասխան որակավորում և փորձառություն ունեցող անձանց հաշվառում է իրականացրել՝ գրանցելով 562 մարդու:

Ալավերդիում տնտեսության զարգացման այլընտրանքային ճյուղերից են գյուղատնտեսությունն ու զբոսաշրջությունը: Համայնքում ընդհանուր 3130,3 հա գյուղատնտեսական նշանակության հողատարածք կա, որից 2661,7 համայնքային սեփականություն է, որտեղ կարելի է պտղատու այգիներ, ջերմոցային տնտեսություն հիմնել: Համայնքի գյուղական թաղամասերում բնակիչները հիմնականում զբաղվում են տնամերձ այգիների մշակմամբ ու անասնապահությամբ: 1990-ականներին համայնքի գյուղական թաղամասերում հաշվառված է եղել 4150 գլուխ անասուն, 2011թ.-ին՝ 1160 (1990-ականների համեմատ՝ 28%), իսկ 2016թ.-ին՝ 2916 (1990-ականների համեմատ՝ 70 %): Ալավերդու համայնքապետարանի կողմից իրականացված համապատասխան ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Ալավերդու 3 գյուղական թաղամասերի, ինչպես նաև հարակից գյուղերում անասնապահության զարգացումը բավարար հիմք է՝ համայնքում վերականգնելու կաթի վերամշակման նախկին արտադրությունը: Վերոնշյալից բացի՝ գյուղական թաղամասերի և հարակից գյուղերի բնակիչները հիմնականում ամռան ամիսներին զբաղվում են հատապտուղների և մրգերի հավաքչությամբ, նաև՝ դրանց մշակմամբ: Հատապտղի և մրգի զգալի քանակը հնարավորություն է ընձեռում համայնքում հիմնելու պտղի վայրկենական սառեցման հոսքագիծ՝ նվազագույնը 210 կգ/ժ արտադրողականությամբ:

| № | Անվանում | Հասունացմանսեզոն | Սեզոնումարտադրանքիքանակ (տոննա) |
|---|---|---|---|
| 1 | Բալ | Մայիս-հունիս | 3,3 |
| 2 | Ազնվամորի | հունիս-սեպտեմբեր | 140 |
| 3 | Թուզ | օգոստոս-սեպտեմբեր | 17 |
| 4 | Մոշ | հուլիս-սեպտեմբեր | 125 |
| 5 | Վայրիտանձ | սեպտեմբեր-հոկտեմբեր | 45 |
| 6 | Դեղձ | օգոստոս-հոկտեմբեր | 100 |
| 7 | Հոն | սեպտեմբեր-հոկտեմբեր | 45 |

Աստիճանաբար աշխուժանում են նաև սպասարկման ոլորտի հաստատությունները: Գործում են «Արդշինինվեստբանկի», «ACBA-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ» բանկի, «ՎՏԲ Հայաստան» բանկի մասնաճյուղերը՝ իրականացնելով ծառայություններ: Ռեստորանները, խանութները զգալի թիվ են կազմում, որոնք աստիճանաբար զարգանում են՝ սպասարկման ոլորտում մատուցելով բարձրորակ ծառայություններ: Համայնքում կան նաև առանձնատուն-հյուրատներ՝ ապահովված անհրաժեշտ բոլոր պայմաններով, որոնք արդեն մի քանի տարի է՝ ընդունում են զբոսաշրջիկների արտերկրից, հանրապետության այլ բնակավայրերից: Տարեցտարի ավելանում է այն ձեռներեցների թիվը, որոնք հատկապես ամռան ամիսներին ընտանիքով ներգրավվում են զբոսաշրջային բիզնեսի մեջ և ծառայություններ են մատուցում զբոսաշրջիկներին (B&B): Համայնքում ստեղծվել է նաև տուրիզմի զարգացման տեղեկատվական կենտրոն:

Ալավերդին աչքի է ընկնում նաև պատմական և ճարտարապետական հուշարձանների առատությամբ: Համայնքի շրջակայքը հարուստ է պատմամշակութային արժեք ներկայացնող հուշարձաններով: Դրանց մեջ են ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության ցանկում ներառված Սանահինի և Հաղպատի վանական համալիրները, Սանահինի պատմական (Քարե) կամուրջը: Այս արժեքների հանդեպ առանձնակի մեծ է զբոսաշրջիկների հետաքրքրությունը, որոնց թիվը տարեցտարի աճում է: Պետք է նշել, որ Ալավերդին զբոսաշրջության զարգացման համար մեծ նախադրյալներ ունի. արդեն իսկ քայլեր են արվել համայնքում և տարածաշրջանում ագրոտուրիզմը (ձիարշավ), էկոտուրիզմը (թռչնադիտարկման ծրագիր), էքստրեմալ տուրիզմը (ռաֆթինգ՝ Դեբեդ գետի վրա) զարգացնելու ուղղությամբ: Արդյունաբերությանը, արտադրությանը և գյուղատնտեսությանը զուգահեռ Ալավերդիում կան անհրաժեշտ բոլոր նախադրյալները՝ եկամտաբեր դարձնելու նաև զբոսաշրջության ոլորտը: Արդյունքում համայնքում ու տարածաշրջանում կլուծվեն տնտեսական, սոցիալական ու բնապահպանական հիմնախնդիրներ:

Ալավերդի համայնքում զբոսաշրջիկների այցելության հիմնական հոսքն ապահովում են զբոսաշրջային հետաքրքրություն ներկայացնող հետևյալ պատմամշակութային հուշարձանները:

| Հուշարձանի անվանումը | Թվագրվում է |
|---|---|
| Սանահին վանական համալիր | 10-13 դդ. |
| Արտյոմ Միկոյանին հուշահամալիր | 1982թ |
| Սանահնի կամուրջ | 12-րդ դար |
| Կոշաբերդի ամրոց | 10-13 դդ. |
| Սուրբ Սարգիս մատուռ | 13-րդ դար |
| Քարայր-կացարան | - |
| Սուրբ Հարություն եկեղեցի | 13-րդ դար |
| ԽաչքարԳրիգորՏուտեորդու | 12-րդ դար |
| Աղբյուր | 13-րդ դար |
| Քարայր-կացարանների համալիր | - |

## Ուսումնական հաստատություններ

| Հ/Հ | Հաստատության անվանումը | Աշխատող համայնքից | Սովորողների քանակ |
|---|---|---|---|
| 1 | Հյուսիսային համալսարանի «Թումանյան» մասնաճյուղ | 21 | 184 |
| 2 | «Ալավերդու պետական քոլեջ» ՊՈԱԿ | 34 | 165 |
| 3 | «Ալավերդու արհեստագործական պետական ուսումնարան» | 63 | 232 |
| 4 | Հայաստանում «Եվրոպական քոլեջ» հիմնադրամի Ալավերդու մասնաճյուղ | 14 | 57 |

## Դպրոցներ

| Հ/Հ | Հաստատության անվանումը | Աշխատող համայնքից | Աշխատող այլ համայնքից | Սովորողների քանակ | Դպրոցի հնարավորությունները /աշակերտ/ |
|---|---|---|---|---|---|
| 1 | Ալավերդու համար 1 դպրոց | 23 | 0 | 60 | 840 |
| 2 | Ալավերդու համար 2 դպրոց | 80 | 2 | 288 | 700 |
| 3 | Ալավերդու համար 4 դպրոց | 27 | 1 | 112 | 300 |
| 4 | Ալավերդու համար 5 դպրոց | 18 | 2 | 141 | 400 |
| 5 | Ալավերդու համար 7 դպրոց | 27 | 3 | 119 | 200 |
| 6 | Ալավերդու համար 8 դպրոց | 15 | 0 | 333 | 960 |
| 7 | Ալավերդու համար 9 դպրոց | 15 | 1 | 100 | 300 |
| 8 | Ալավերդու համար 10 դպրոց | 2 | 5 | 67 | 200 |
| 9 | Ալավերդու համար 11 դպրոց | 20 | 0 | 59 | 180 |
| 10 | Ալավերդու համար 12 դպրոց | 15 | 1 | 527 | 1200 |

## Համայնքապետարանի ենթակայության հիմնարկների աշխատողների և երեխաների թիվը

| Հ/Հ | Հաստատության անվանումը | Աշխատող | Մանկա-վարժ | Սովորողների քանակ |
|---|---|---|---|---|
| 1 | «Ալավերդի քաղաքային համայնքի թիվ 1 ՆՈՒՀ» ՀՈԱԿ | 12 | 6 | 60 |
| 2 | «Ալավերդի քաղաքային համայնքի թիվ 2 ՆՈՒՀ» ՀՈԱԿ | 22 | 12 | 146 |
| 3 | «Ալավերդի քաղաքային համայնքի թիվ 3 ՆՈՒՀ» ՀՈԱԿ | 8 | 5 | 23 |
| 4 | «Ալավերդի քաղաքային համայնքի թիվ 4 ՆՈՒՀ» ՀՈԱԿ | 22 | 12 | 109 |
| 5 | «Ալավերդի քաղաքային համայնքի թիվ 5 ՆՈՒՀ» ՀՈԱԿ | 8 | 5 | 22 |
| 6 | «Ալավերդի քաղաքային համայնքի թիվ 6 ՆՈՒՀ» ՀՈԱԿ | 28 | 15 | 163 |
| 7 | «Ալավերդի քաղաքային համայնքի մշակութային կենտրոն» ՀՈԱԿ | 52 | - | - |
| 8 | «Ալավերդու Ռոմանոս Մելիքյանի անվան երաժշտական դպրոց» ՀՈԱԿ | 27 | 20 | 120 |
| 9 | «Ալավերդու մանկական արվեստի դպրոց» ՀՈԱԿ | 15 | 13 | 108 |
| 10 | «Ալավերդու քաղաքային համայնքի գեղարվեստի դպրոց» ՀՈԱԿ | 12 | 9 | 79 |
| 11 | «Ալավերդու քաղաքային համայնքի Օլեգ Գորբունովի անվան մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ | 12 | 6 | 84 |
| 12 | «Ալավերդու քաղաքային ըմբշամարտի դպրոց» ՀՈԱԿ | 10 | 5 | 70 |
| 13 | «Ալավերդու քաղաքային համայնքի Միկոյան եղբայրների թանգարան» ՀՈԱԿ | 3 | - | - |

Ալավերդու համայնքապետարանի ենթակայությամբ գործում են 13 համայնքային ոչ առևտրային կազմակերպություններ.
6 նախադպրոցական ուսումնական հաստատություններ,
1 երաժշտական դպրոց, որտեղ գործում են դաշնամուրի, փողային և լարային, նաև՝ ազգային նվագարանների, դուդուկի և շվիի դասարաններ,
1 մանկական արվեստի դպրոց, որտեղ գործում է դաշնամուրի, դհոլի, լարային և ազգային նվագարանների դասարաններ, վոկալի դասարան,
1 գեղարվեստի դպրոց, որտեղ գործում են քանդակագործության, կավագործության, փայտի փորագրության, գոբելենի և նկարչության դասարաններ,
1 ըմբշամարտի դպրոց և 1 մարզադպրոց, որտեղ անցկացվում են ըմբշամարտի, վոլեյբոլի, բասկետբոլի, հանդբոլի՝ աղջիկների և տղաների խմբակային պարապունքներ, պարբերաբար անցկացվում են քաղաքային, մարզային և հանրապետական մրցաշարեր:

1 մշակույթի կենտրոն, որի ենթակայությամբ գործում են Սարահարթի մշակույթի պալատը, Ակների ակումբը՝ գրադարանով, երկու գրադարաններ, դերասանական ստուդիան և ժողգործիքների համույթը,
1 թանգարան, որը շուտով կհամալրվի ժամանակակից և ինտերակտիվ ցուցանմուշներով:

## Քաղաքի առողջապահական ծառայություններ մատուցող կազմակերպություններ

| Հ/Հ | Կազմակերպության անվանումը |
|---|---|
| 1 | «Ալավերդու բժշկական կենտրոն» ՓԲԸ /հիվանդանոցի շենքը 60 մահճակալի հնարավորություն ունի/ |
| 2 | «Ալավերդու ստոմատոլոգիական պոլիկլինիկա» ՊՓԲԸ |
| 3 | Ալավերդու հունական Հիպոկրատ հիմնադրամ |
| 4 | ԱՆ ՊՀՀՏ Լոռու մարզային «Փորձագիտական կենտրոնի» Թումանյան մասնաճյուղ |
| 5 | «Ալավերդու ախտահանման կենտրոն» ՓԲԸ |

## Ընտանեկան նպաստիհամակարգումգրանցվածընտանիքներևկենսաթոշակառուներ

| | |
|---|---|
| Ընտանեկաննպաստիհամակարգումգրանցվածընտանիքներ | 1236 |
| Կենսաթոշակառուներ | 2776 |

Համայնքի բնակչությունն, ըստ զբաղվածության, բաժանվում է մի քանի խմբի՝ մանր և միջին առևտրով զբաղվողներ, պետական և տեղական ինքնակառավարման կառույցվածքներում աշխատողներ, գործազուրկներ, սեզոնային շինարարություններում, արդյունաբերական գործարանում աշխատողներ, սպասարկման ոլորտում աշխատողներ:

Ներկայում համայնքում գործող արդյունաբերական գործարանում 584 մարդ է աշխատում, որը կազմում է համայնքի փաստացի բնակիչների թվի 4,4 %:

Համայնքում գրանցված գործազուրկների թիվը փաստացի բնակիչների թվի 5 %-ն է կազմում:

## Զբաղվածության կենտրոնում գրանցված գործազուրկներ

| Հ/Հ | Անվանում | Ընդհանուր | Արական | | Իգական | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | Մարդ | % | Մարդ | % |
| 1 | Ընդհամենը գրանցված գործազուրկներ | 655 | 161 | **24,6** | 494 | **75,4** |
| 1.1 | Տարրական կրթությամբ | 5 | 3 | **60** | 2 | **40** |
| 1.2 | Միջնակարգ կրթությամբ | 294 | 20 | **6,8** | 274 | **93,2** |
| 1.3 | Միջին մասնագիտական կրթությամբ | 153 | 24 | **15,7** | 129 | **84,3** |
| 1.4 | Բարձրագույն կրթությամբ | 47 | 9 | **19,1** | 38 | **80,9** |

## Հողային հաշվեկշիռ

| Հ/Հ | Հողի տեսակ | Չափման միավոր | Քանակ | % |
|---|---|---|---|---|
| 1 | Գյուղատնտեսական նշանակության հողեր | հա | 3130,32 | 34,6 |
| 2 | Բնակելի շինությունների տակ հողեր | հա | 588,17 | 6,5 |
| 3 | Արդյունաբերության, տրանսպորտի, կապի, պաշտպանության և այլ նշանակության հողեր | հա | 134,6 | 1,5 |
| 4 | Հանքավայրեր | հա | 17,97 | 0,2 |
| 5 | Բնապահպանական, առողջապահական, հանգստի գոտիներ, մարզական և պատմամշակութային նշանակության հողեր | հա | 23,9 | 0,3 |
| 6 | Անտառային ֆոնդի հողեր | հա | 2862,92 | 31,7 |
| 7 | Ջրային ֆոնդի հողեր | հա | 55,91 | 0,6 |
| 8 | Վարելահողեր | հա | 230,72 | 2,6 |
| 9 | Այգի | հա | 13,17 | 0,1 |
| 10 | Խոտհարք | հա | 633,37 | 7,0 |
| 11 | Արոտ | հա | 1351,34 | 14,9 |

Համայնքում բազմաբնակարան շենքերի թիվը 183 է՝ 304134քմ, որից 146-ը քարե է, 37-ը՝ պանելային: Բազմաբնակարան շենքերից 177-ը ունեն թեք տանիք, 5-ը՝ հարթ: Բազմաբնակարան շենքերի բնակարանների շուրջ 94 տոկոսը սեփականաշնորհված է: Բազմաբնակարան շենքերում բնակարանների քանակը շուրջ 5157 է: Համայնքում առկա են 1528 առանձնատներ՝ 89776քմ:

## 2.3. Համայնքում իրականացվող ծրագրեր

### Հանրապետական և մարզային ծրագրեր

1. 2016 թվականին մեկնարկել է Ալավերդի համայնքի Սանահին գյուղական թաղամասի՝ թվով 300 աշակերտ ընդունելու հնարավորություն ունեցող Արտեմ Միկոյանի անվան համար 4 հիմնական դպրոցի հիմնանորոգման ծրագիրը: Ավարտվել են նախագծա-նախահաշվային աշխատանքները, 2017 թվականին նախատեսվում է կատարել դպրոցի շենքի հիմնանորոգումը:
   Դպրոցը ներկայում չունի միջոցառումների անցկացման համար համապատասխան տարածք, և շենքային պայմաններն անբավարար են: Հիմնանորոգման ավարտից հետո համայնքի Սանահին գյուղական թաղամասի շուրջ 120 աշակերտները ժամանակակից չափորոշիչներին համապատասխան կրթական միջավայր կունենան:
2. 2016 թվականի սեպտեբերից մեկնարկել է Ալավերդու Սարահարթ թաղամասի ըմբշամարտի դպրոցի շենքի հիմնանորոգումը: Պլանավորվում է իրականացնել նաև համայնքի ներքևի հատվածում գտնվող Օլեգ Գորբունովի անվան մանկապատանեկան մարզադպրոցի հիմնանորոգում:
3. 2016 թվականից մեկնարկել է Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական (Մ- 6) ճանապարհի շուրջ 90 կմ երկարությամբ հիմնական տարանցիկ մայրուղու հիմնանորոգման և վերակառուցման ծրագիրը: Ծրագրի շրջանակներում Ալավերդի քաղաքի տարածքում կհիմնանորոգվի 3.4 կմ, Ալավերդի-Վրաստանի սահման հատվածում՝ մոտ 36.3 կմ ճանապարհ: Նախագծով նախատեսված հիմնական շինարարական աշխատանքների ընթացքում կկատարվեն հողային պաստառի վերականգնման, անվտանգության էլեմենտների տեղադրման, ճանապարհային պատվածքի վերակառուցման և նորոգման աշխատանքներ:
   Ճանապարհի հիմնանորոգումը կնպաստի տնտեսության, մասնավորապես զբոսաշրջության զարգացմանը:
4. Ալավերդի համայնքի Թումանյան փողոցից մինչև Սանահին գյուղական թաղամաս տանող 8 կմ երկարությամբ ճանապարհահատվածը գտնվում է անբարեկարգ վիճակում, ինչը անհարմարություններ է ստեղծում ոչ միայն տեղի վարորդների, այլև համայնք այցելող զբոսաշրջիկների համար: Այս ճանապարհը կարևոր նշանակություն ունի համայնքի համար զբոսաշրջային այցեքարտ դարձած պատմամշակութային մեծ արժեք ներկայացնող Սանահինի Վանական համալիր տանող միակ երթուղին լինելու առումով: Առաջիկա տարիներին նախատեսվում է հիմնանորոգել 8 կմ երկարությամբ այս ճանապարհահատվածը:
5. Ալավերդի համայնքում 1970-ական թվականներին կառուցվել են բարձրահարկ բազմաբնակարանային շենքեր, որոնց տանիքները տարիներ շարունակ չեն վերանորոգվել, և դրանց ներկայիս անմխիթար վիճակը դարձել է համայնքի առաջնահերթ լուծում պահանջող խնդիրը: Պետական ֆինանսավորմամբ 2017-2021

թվականներին նախատեսվում է իրականացնել 14 բազմաբնակարանային շենքերի տանիքների վերանորոգում:

6. Ալավերդի համայնքի երկու խոշոր գյուղական թաղամասերը՝ 250 բնակիչ ունեցող Ակները (համայնքի փաստացի բնակչության թվի 2%-ը) և 360 բնակիչ ունեցող Սանահինը (համայնքի փաստացի բնակչության թվի 3%-ը), գազաֆիկացված չեն: 2017թ-ին նախատեսվում է Սանահին, իսկ 2018թ-ին՝ Ակներ թաղամասերի գազաֆիկացում:

## Միջհամայնքային ծրագրեր

Երևան, Էջմիածին, Ստեփանավան և Վանաձոր համայնքների հետ նախատեսվում է իրականացնել հետևյալ ծրագրերը՝

- համագործակցող կողմերի փոխադարձ այցերի կազմակերպում,
- փորձի փոխանակում,
- տեխնիկական, նյութական աջակցության ցուցաբերում,
- մարզամշակութային ծրագրերի ու միջոցառումների իրականացում,
- վարպետության դասընթացների կազմակերպում (ազգային երգուպարի, ծեսերի ուսուցում և այլն)

Օձուն, Հաղպատ, Աքորի, Թեղուտ, Թումանյան, Շնող, և Ախթալա համայնքների հետ իրականացվում է «աղբահանության կազմակերպում և տեղափոխում Ասավերդի համայնքի ենթակայության տակ գտնվող լիցենզավորված աղբավայր» ծրագիրը:

«Թումանյան աշխարհ» զբոսաշրջային կենտրոնի ծրագիրը իրականացվում է Ալավերդի, Ախթալա, Օձուն, Հաղպատ, Արդվի, Թումանյան և Դսեղ համայնքների բյուջեից կատարվող ներդրումների հաշվին:

## Այլ ծրագրեր և միջոցառումներ

- Ալավերդի համայնքում 2015 թվականին փողոցային հին լուսատուները փոխարինվելու են 70 նոր էներգախնայող լուսատուներով, 2016 թվականին՝ 40: Այս ծրագիրը շարունակական է, յուրաքանչյուր տարի տնտեսված գումարներով նախատեսվում է նոր լուսատուների արդիականացում:
  Նոր լուսատուները մոտ 4 անգամ ավելի էներգախնայող են, քան ներկայում օգտագործվող լուսատուները: Սա հնարավորություն կտա խնայված գումարները ուղղելու այլ թաղամասերի լուսատուների արդիականացմանը:
- 2016 թվականի հուլիսից Ալավերդի համայնքի Սանահին թաղամասում գտնվող «Միկոյան եղբայրների» թանգարանը 3 տարի ժամկետով վարձակալությամբ հանձնվել է «Լուքինգ Ֆորվարդ» զբոսաշրջության զարգացման հիմնադրամին: Վարձակալության երեք տարիների համար հիմնադրամը թանգարանում կատարելու է 35 մլն դրամի ներդրում, որի արդյունքում 2016թ-ից հիմնանորոգվում են թանգարանի և թանգարանին կից շինության տանիքները, կառուցվելու է սանհանգույց, ինչպես նաև թանգարանի հավաքածուն համալրվելու է նոր և ինտերակտիվ ցուցանմուշներով:
  Թանգարանը նոր ինտերակտիվ ցուցանմուշներով համալրելու արդյունքում այցելուներին Միկոյան եղբայրների կենսագրության վերաբերյալ առավել մանրամասն և ուշագրավ տեղեկատվություն կտրամադրի: Ակնկալվում է նաև զբոսաշրջիկների առավել մեծ հոսք, ինչը կապահովի զբոսաշրջային ֆինանսական հոսքեր դեպի համայնք:

- 2016 թվականի սեպտեմբերից մեկնարկել է Ալավերդու Սարահարթ թաղամասի ըմբշամարտի դպրոցի շենքի հիմնանորոգումը: Հիմնանորոգման ծրագիրն իրականացվում է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից՝ 79,5 մլն դրամ ներդրումով: Տաս տոկոսի չափով ներդրում էլ կատարել է Ալավերդու համայնքապետարանը (7,95մլն դրամ): Ըմբշամարտի դպրոցի հիմնանորոգման ծրագրով հիմնական շենքին կից երկհարկանի մասնաշենք է կառուցվելու, որտեղ կտեղակայվի դպրոցի վարչական մասը, սանհանգույցը, հանդերձարանները: Սարահարթի Ըմբշամարտի դպրոցի շենքը նախատեսվում է շահագործման հանձնել 2017 թվականի ապրիլին:
  Ալավերդի համայնքում առավել մեծ է հետաքրքրությունը ըմբշամարտի նկատմամբ: Ըմբշամարտի դպրոցի սաները տարբեր տարիների ընթացքում հաջողություններ են գրանցել Հայաստանի, Եվրոպայի առաջնություններում:
  Ըմբշամարտի նկատմամբ եղած հետաքրքրությունը մեծացնելու և խրախուսելու, ինչպես նաև ժամանակակից պայմաններ ապահովելու նպատակով կարևորվեց դպրոցի հիմնանորոգման ծրագիրը:
- 2016 թվականից Ալավերդի համայնքում մեկնարկել է «Տաշիր» բարեգործական հիմնադրամի միջոցներով կառուցվող մանկապարտեզի շինարարությունը: Մանկապարտեզը գտնվում է Էնգելս թաղամասում: Այս մանկապարտեզ կհաճախեն հիմնականում Էնգելս և Դեբեդ թաղամասի 125 երեխաներ: Ալավերդի համայնքի ծայրամասային Դեբեդ և Էնգելս թաղամասերում մանկապարտեզներ չեն գործում, որի պատճառով այս թաղամասերի երեխաների մի մասը (մանկապարտեզահասակ երեխաների շուրջ 30 %-ը) մանկապարտեզ հաճախում է կենտրոնական հատվածում: Երեխաների զգալի մասն էլ զրկվում է նախադպրոցական կրթություն ստանալու հնարավորությունից: Մանկապարտեզի կառուցումից հետո այստեղ նախադպրոցական կրթություն ստանալու հնարավորություն կունենան վերոնշյալ թաղամասերի երեխաներ:
- ԱԿԲԱ բանկը Հայաստանի մի շարք համայնքներում, այդ թվում նաև Ալավերդիում, 2017 թվականից իրականացնելու է պիլոտային ծրագրեր էներգետիկ ոլորտում: Համայնքում ըստ առաջնահերթության դասակարգվելու են էներգետիկ ոլորտի խնդիրները, ապա կատարվելու են ներդրումներ:
  Համայնքապետարանը կարևորում է էներգետիկ ոլորտում կատարվող ծրագրերը, որովհետև դրանց արդյունքում ոչ միայն գումարներ են տնտեսվում, այլև զգալիորեն նվազում են արտանետումները:
- Հիմնանորոգման կարիք ունի նաև Ալավերդու մանկական ստեղծագործական կենտրոնի (նախկին Պիոներ տուն) շենքը, որտեղ համայնքապետարանը նախատեսում է հիմնել ցերեկային կենտրոն: Կենտրոնի շահառուները հիմնականում կլինեն հաշմանդամություն ունեցող երեխաները: Ներկայում այս ծրագրով հետաքրքրված են միջազգային մի քանի կազմակերպություններ: 2018թ-ին պլանավորվում է միջազգային դոնոր կազմակերպությունների հետ համատեղ իրականացնել շենքի հիմնանորոգումը:

## Համայնքապետարանի կողմից իրականացվող ծրագրեր և միջոցառումներ

### Քաղաքաշինություն

1. Ալավերդի համայնքի 3 բազմաբնակարան շենքերի տանիքների նորոգում

2. Ալավերդի քաղաքի կենտրոնական հրապարակների և Զորավար Անդրանիկ փողոցի մասնակի հատվածի՝ 2319ք-ի սալիկապատում
3. Ալավերդի քաղաքի ներհամայնքային փողոցների 5645 մ2-ի փոսային նորոգում, ասֆալտապատում
4. Ալավերդի համայնքում շուրջ 317 խորանարդ մետր հենապատերի վերանորոգում
5. Ալավերդի համայնքի 52,3 խորանարդ մետր հեղեղատարների մաքրում
6. Ալավերդի քաղաքի 28 քառակուսի մետր աստիճանների և աստիճանահարթակների վերականգնում
7. Ալավերդի համայնքում կանաչապատ տարածքների վերականգնում, ընդլայնում և բարեկարգում (շուրջ 1400 քառակուսի մետր տարածք)
8. Համայնքի թվով 205 փողոցային լուսատուների նորոգում և արդիականացում
9. 44 աղբարկղերի ձեռքբերում և տեղադրում
10. Ալավերդի համայնքում 660 մ երկարությամբ կոյուղագծերի վերականգնում
11. Ալավերդի համայնքում 1 հանրային զուգարանի կառուցում
12. Թվով 2 վերելակների վերանորոգում

**2017-2021թթ.-ին հիշարժան տարեթվերի, տոների և հիշատակի օրերին նվիրված միջոցառումներ և հուշ-երեկոներ**

1. Նոր տարվան և Սուրբ Ծննդին նվիրված միջոցառումներ
2. Բանակի օր
3. Մայրության, գեղեցկության և սիրո տոն
4. Հարության տոն (Սուրբ Զատիկ)
5. Եղեռնի զոհերի հիշատակի համար սգո երթ
6. Սերգեյ Զատիկյանի անվան հուշամրցաշար
7. Տոնակատարություն՝ նվիրված մայիսի 9-ին և Շուշիի ազատագրման օրվան
8. Երեխաների իրավունքների պաշտպանության օրվան նվիրված միջոցառումներ
9. Վարդավառ
10. Գիտելիքի և դպրության օր
11. Ուսուցչի օր
12. Անկախության օր
13. Ալավերդու օր
14. Օլեգ Գորբունովի անվան հանդբոլի հուշամրցաշար
15. «Մեկ օր մշակութային Ալավերդիում» փառատոն
16. «Թատերական Լոռի» փառատոն
17. Սպորտի օր
18. «Քաղաքապետի գավաթ» մինի ֆուտբոլի բաց առաջնություն
19. Ուսանողության օր

## 2.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանասական կանխատեսումները

### ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՄՈՒՏՔԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Համայնքի 2015-2016թթ. Բյուջեների մուտքերի ցուցանիշները և 2017-2021թթ. բյուջեների մուտքերի կանխատեսումը

| Հ/հ | ՄՈՒՏՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | 2015թ. փաստ. | 2016թ. հաստ. | 2017թ. նախ . | 2018թ. կանխ. | 2019թ. կանխ. | 2020թ. կանխ. | 2021թ. կանխ. |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | **ԸՆԴԱՄԵՆԸ ՄՈՒՏՔԵՐ** | **502526,3** | **423665,7** | **419292,5** | **440432,2** | **459362,5** | **453319,7** | **456979,4** |
| 1 | Հողի հարկ | 4624,4 | 5913,4 | 5913,5 | 5913,5 | 5913,5 | 5913,5 | 5913,5 |
| 2 | Գույքահարկ | 38638,9 | 37858,6 | 42492,2 | 42992,2 | 42992,2 | 43292,2 | 43492,2 |
| 3 | Տուրքեր | 26438,0 | 24450,0 | 22554,0 | 22554,0 | 23054,0 | 23254,0 | 23554,0 |
| 4 | Պաշտոնական դրամաշնորհներ | 388445,8 | 311790,9 | 307659,6 | 328299,3 | 347729,6 | 341186,8 | 344346,5 |
| 5 | Այլ եկամուտներ | 30260,6 | 32652,8 | 34673,2 | 34673,2 | 34673,2 | 34673,2 | 34673,2 |
| 6 | Ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքեր | 14118,56 | 11000,0 | 6000,0 | 6000,0 | 5000,0 | 5000,0 | 5000,0 |

## ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Համայնքի 2015-2016թթ. բյուջեների ծախսերը և 2017-2021թթ. բյուջեների ծախսերի կանխատեսումը

ա) ըստ գործառական դասակարգման

| Հ/հ | ԾԱԽՍԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | 2015թ. փաստ. | 2016թ. հաստ. | 2017թ. Նախ. | 2018թ. կանխ.. | 2019թ. կանխ.. | 2020թ. կանխ.. | 2021թ. կանխ.. |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ | 511221,1 | 423665,7 | 419292,5 | 440432,2 | 459362,5 | 453319,7 | 456979,4 |
| 1 | Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ | 89060,0 | 97082,7 | 85024,0 | 85024,0 | 85024,0 | 85024,0 | 85024,0 |
| 2 | Պաշտպանություն | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 |
| 3 | Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 |
| 4 | Տնտեսական հարաբերություններ | 16659,3 | 8050,0 | 9250,0 | 28817,8 | 44148,1 | 16250,0 | 34265,0 |
| 5 | Շրջակա միջավայրի պաշտպանություն | 156467,8 | 72246,5 | 112330,8 | 112330,8 | 112330,8 | 112330,8 | 112330,8 |
| 6 | Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն | 18012,2 | 5873,0 | 6934,9 | 8434,9 | 8934,9 | 26554,0 | 8234,9 |
| 7 | Առողջապահություն | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 |
| 8 | Հանգիստ, մշակույթ և կրոն | 55052,9 | 47681,2 | 38492,7 | 38492,7 | 39492,7 | 40492,7 | 41492,7 |
| 9 | Կրթություն | 168928,9 | 166892,3 | 143932,0 | 143932,0 | 144932,0 | 146068,2 | 147932,0 |
| 10 | Սոցիալական պաշտպանություն | 7040,0 | 5200,0 | 3700,0 | 3700,0 | 4700,0 | 6700,0 | 7700,0 |
| 11 | Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր | 0,0 | 20640,0 | 19628,1 | 19700,0 | 19800,0 | 19900,0 | 20000,0 |

բ) ըստ տնտեսագիտական դասակարգման

| Հ/Հ | ԾԱԽՍԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | 2015թ. փաստ. | 2016թ. հաստ. | 2017թ. Նախ. | 2018թ. կանխ. | 2019թ. կանխ. | 2020թ. կանխ. | 2021թ. կանխ. |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ | 511221,1 | 423665,7 | 419292,5 | 440432,2 | 459362,5 | 453319,7 | 456979,4 |
| Ա | *ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ* | 407105,5 | 412665,7 | 392462,6 | 392534,5 | 395751,2 | 400987,4 | 403951,2 |
| 1 | Աշխատանքի վարձատրություն | 64799,2 | 77573,0 | 72277,4 | 72277,4 | 72277,4 | 72277,4 | 72277,4 |
| 2 | Ծառայությունների և ապրանքների ձեռք բերում | 52363,8 | 25799,7 | 22339,4 | 22339,4 | 22339,4 | 22339,4 | 22339,4 |
| 3 | Տոկոսավճարներ | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 |
| 4 | Սուբսիդիաներ | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 |
| 5 | Դրամաշնորհներ | 271740,4 | 283018,0 | 270733,7 | 270733,7 | 272850,4 | 275986,6 | 277850,4 |
| 6 | Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ | 13461,2 | 4200,0 | 6700,0 | 6700,0 | 7700,0 | 9700,0 | 10700,0 |
| 7 | Այլ ծախսեր | 4740,9 | 22075,0 | 20412,1 | 20484,0 | 20584,0 | 20684,0 | 20784,0 |
| Բ | *ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ* | 104115,6 | 11000,0 | 26829,9 | 47897,7 | 63611,3 | 52332,3 | 53028,2 |
| 1 | Հիմնական միջոցներ | 104115,6 | 11000,0 | 26829,9 | 47897,7 | 63611,3 | 52332,3 | 53028,2 |
| 2 | Պաշարներ | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 3 | Բարձրարժեք ակտիվներ | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 4 | Չարտադրված ակտիվներ | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |

## 2.5. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ

Ալավերդի համայնքի տնտեսության զարգացման հիմնական ճյուղերն են արդյունաբերությունը, տուրիզմը, գյուղատնտեսությունը, նաև՝ փոքր և միջին ձեռնարկատիրությունը: Համայնքապետարանի բյուջեի և մասնավոր ներդրումների միջոցով վերոնշյալ ոլորտների զարգացմանն ուղղված քայլեր են իրականացվում: Սակայն կան մի շարք գործոններ, որոնք խոչընդոտում են համայնքի սոցիալ-տնտեսական համաչափ զարգացմանը.

## Տուրիզմ

Ալավերդին ունի տուրիզմի կայուն զարգացման համար անհրաժեշտ հիմնական նախադրյալներ՝ պատմամշակութային հարուստ ժառանգություն, բնակլիմայական բարենպաստ պայմաններ և աշխարհագրական դիրք: Սակայն համայնքում հին տեխնոլոգիաներով աշխատող պղնձաձուլական գործարանի առկայությունը զբոսաշրջության զարգացման ամենամեծ խոչընդոտն է: Ներկայում գործարանի ղեկավարության կողմից քայլեր են ձեռնարկվում՝ վնասակարար արտանետումների քանակը նվազեցնելու և արտադրության մեջ նոր տեխնոլոգիաներ կիրառելու ուղղությամբ:

Տուրիզմի զարգացմանը խոչընդոտող գործոններից է նաև համայնքի ճանապարհների (հատկապես համայնքի վարչական տարածքում գտնվող գյուղական թաղամասերի /Սանահին, Ակներ, Մադան/ և նրանց կապող ճանապարհների) անբարեկարգ վիճակը: Համայնքապետարանի բյուջեի միջոցներով հնարավոր չէ ներհամայնքային ճանապարհների կապիտալ վերանորոգում իրականացնել:

Համայնքում զարգացման թույլ մակարդակ ունի սպասարկման ոլորտը, ինչը հերթական խոչընդոտն է՝ տարածաշրջան եկած զբոսաշրջիկին տեղում պահելու և դրա արդյունքում առաջացած ֆինանսական հոսքերը համայնքի զարգացմանն ուղղելու համար:

## Գյուղատնտեսություն

Դեռևս 1960-ականներին Ալավերդուն հարակից 3 գյուղեր՝ Ակները, Սանահինը և Մադանը, համայնքների խոշորացման արդյունքում վարչականորեն մտել են Ալավերդու տարածքի մեջ: Ալավերդի համայնքի գյուղական թաղամասերի բնակիչները հիմնականում զբաղվում են հողագործությամբ (ամռան ամիսներին նաև հատապտուղների, մրգերի հավաքչությամբ) և անասնապահությամբ:

Գյուղատնտեսությունը համայնքում զարգացնելու նպատակով քայլեր են կատարվում Ալավերդու Սանահին գյուղական թաղամասում գյուղատնտեսական կոոպերատիվ տնտեսության ստեղծելու ուղղությամբ: Սակայն կատարվող աշխատանքների արդյունավետության համար խոչընդոտ կարող են լինել միջհամայնքային և ներհամայնքային անբարեկարգ ճանապարհները և ոռոգման համակարգի բացակայությունը (ինքնահոս ոռոգման համակարգի կառուցումը հնարավոր է իրականացնել ոչ մեծ ֆինանսական ներդրումների առկայության դեպքում): Վերջինս խոչընդոտող գործոն է նաև մեծ և փոքր ջերմոցային տնտեսություններ ստեղծելու համար: Ալավերդու գյուղական թաղամասերում գյուղատնտեսական նշանակության հողերի մեծ մասը անմշակ է մնում՝ ոչ միայն ոռոգման համակարգի բացակայության, այլև համապատասխան ներդրումների բացակայության պատճառով:

## Արտադրություն

Ալավերդիում հնարավոր է զարգացնել փոքր և միջին ձեռնարկատիրությունը՝ խթանելով արտադրության ոլորտի զարգացումը: Համայնքում ներկայում գործում են հացի, գարեջրի, ինչպես նաև քարի և փայտի վերամշակման արտադրամասեր: Ֆինանսական համապատասխան ներդրումների առկայության դեպքում հնարավոր կլինի զարգացնել կարի արտադրության և կաթի ու պտղի վերամշակման ոլորտը: Այն դեպքում, երբ համայնքն ունի դրա համար կարևոր բոլոր նախադրյալները:

## 2.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների վերլուծություն

### Համայնքի ուժեղ կողմերը

1. Բարձր մտավոր ներուժի առկայություն
2. Պատմամշակութային հարուստ ժառանգություն
3. Մարզամշակութային հարուստ ավանդույթներ
4. Արդյունաբերական ենթակառուցվածքների և արտադրության կազմակերպման պատմական փորձ և ավանդույթներ
5. Կենցաղային թափոնների աղբավայրերի առկայություն և այն տեսակավորելու, վերամշակելու հեռանկար

### Համայնքի հիմնական թույլ կողմեր

1. Ներհամայնքային ճանապարհների անբարեկարգ վիճակ
2. Գյուղական թաղամասերում ջրամատակարարման և այլ խնդիրներ
3. Աշխատուժի շուկայում առաջարկվող աշխատատեղերի և աշխատանք փնտրողների մասնագիտական որակավորման դիսբալանս
4. Կանանց աշխատատեղերով ապահովելու խնդիր
5. Բավարար ռեսուրսներ և նրանց համապատասխան ֆինանսական միջոցների բացակայություն
6. Մասնավոր ձեռնարկության անբավարար ակտիվություն և փոխհամագործակցություն համայնքային հիմնախնդիրների լուծման գործում
7. Գործազրկության և աղքատության առկայություն

### Համայնքի հիմնական սպառնալիքներ

1. Բնապահպանական խնդիրներ, արտադրական արտանետումների ուտիլիզացիայի բացակայություն
2. Հիվանդությունների դինամիկ աճ
3. Դեմոգրաֆիկ անբավարար իրավիճակ և արտագաղթ
4. Սպասարկող կազմակերպությունների գույքային և տեխնիկական թույլ բազա, ինչպես նաև բարոյապես և ֆիզիկապես մաշված հիմնական ֆոնդեր
5. Տիմ-մասնավոր հատված թույլ փոխգործակցություն
6. Հեղեղատարների անբարեկարգ վիճակ
7. Աշխարհագրական դիրքը (լեռնային տարածքին բնորոշ քարաթափման վտանգ)
8. Բնակֆոնդի, կոմունիկացիաների մաշվածության բարձր աստիճան

### Համայնքի հնարավորությունները

1. Ներդրումային գրավչության ոլորտներ
2. Քույր քաղաքների առկայություն
3. Ջբոսաշրջային գրասենյակի առկայություն

4. Բարենպաստ բնակլիմայական պայմաններ
5. Նպաստավոր աշխարագրական դիրք
6. Բնական պաշարներով հարուստ ընդերք
7. Բազմաճյուղ և դիվերֆիկացված տնտեսություն կազմակերպելու իրատեսական հեռանկար
8. Զբոսաշրջության զարգացում համար անհրաժեշտ նախադրյալներ
   8.1. Բնակլիմայական բարենպաստ պայմաններ
   8.2. Պատմամշակութային հարուստ ժառանգություն (*Ալավերդու տարածաշրջանում են գտնվում ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված հայաստանյան պատմական հուշարձաններից երեքը՝ Սանահինի, Հաղպատի վանական համալիրները, Սանահինի պատմական քարե կամուրջը (12-րդ դար)*)
   8.3. Զբոսաշրջիկների համար հետաքրքրություն ներկայացնող այցելության վայրեր (*«Միկոյան եղբայրների» թանգարան, Հայաստանի ազգային պատկերասրահի Ալավերդու մասնաճյուղ, «Սանահինի Հայի տուն»*)
   8.4. Համայնքում ամեն տարի իրականացվող միջոցառումներ (*«Մեկ օր մշակութային Ալավերդիում» ամենամյա փառատոն, «Թափեանակն Լոռի» փառատոն*)
9. Աշխարհագրական տեղանք (*Ալավերդի քաղաքը տնտեսաաշխարհագրական բարենպաստ դիրք ունի: Մարզկենտրոն Վանաձորից հեռավորությունը 44 կմ է, Երևանից՝ մոտ 167 կմ, Ռուսաստանի Դաշնության սահմանից մոտ 300 կմ, Սահմանակից է Վրաստանի Հանրապետությանը (հեռավորությունը սահմանից՝ 43 կմ), ինչը կարևոր առավելություն է՝ ցանկացած արտադրանք հարևան հանրապետություն արտահանելու համար:Համայնքի միջով է անցնում Հանրապետության երկաթուղային հաղորդակցության գլխավոր երակը՝ Թբիլիսի-Երևան երկաթգիծը, Հանրապետության արտահանման և ներկրման ավտոտրանսպորտային գլխավոր՝ Թբիլիսի-Ալավերդի-Երևան մայրուղին*)
10. Ջրային ռեսուրսներ (*Համայնքի տարածքով է հոսում լեռնային Դեբեդ գետը: Այն հնարավոր է օգտագործել հիդրոէլեկտրակայաններ կառուցելու համար, որը կհանդիսանա համայնքի համար կարևոր կենսական նշանակություն ունեցող էլեկտրաէներգիայի աղբյուր*)

# 3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում

## 3.1 Համայնքի զարգացման տեսլական

Ալավերդին մաքուր և հարուստ քաղաք է, որտեղ մարդիկ ունեն հավասար հնարավորություններ, քաղաքացիները չեն ցանկանում լքել իրենց քաղաքը, որովհետև ունեն աշխատանք, կայուն սոցիալական պայմաններ: Կա պատասխանատու, ազատամիտ, օրինապաշտ և պահանջատեր հասարակություն, ազատ տնտեսական գոտի, արդիական և բաց կրթական միջավայր, աշխույժ մարզամշակութային կյանք և ցանկալի անկյուն է զբոսաշրջիկների համար:

